

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻԱՅ ՔՐՕՆԻԿ

Մեղանում իսկական թատրոնը—սիրողների ներկայացումներն են, եւ այդ միտքը չափոնցի նաև անցեալ տարի, եւ եւ կարծում եմ, որ չը պէտք է շատ ցաւել մշտական բեմի բացակայութեան համար, եթէ միայն յեր հասարակութեան մէջ նոքա, որոնց բնածին տաղանդը բնական կոչման իրաւունք է տալիս, միշտ պատրաստ լինին խմբել մի ներկայացման համար, երբ վերջինս ամենքից սպասուում է, երբ նոքա կարող են համոզած լինել, որ հասարակութիւնը առանց ալ և ուղութեան կը զա թատրոնում իւր տեղը գրաւելու: Բայց մի ալոպիսի լաւ խմբի գոյութիւնը միանդամաւ կարևոր է՝ նոր երևացող պիեսներ փորձելու համար: Ահա, նոյն ալն սիրողների խումբը, որը անցեալ տարի ներկայացրեց «Դարբնոցապետ»-ը Ժօրթ Օհնէ'ի և որը ալնքան հաւանութիւն ստացաւ, նոյն ալը խումբը, ուժեղացրած մի նոր կարևոր ուժով, ներկայացրեց պ. Սունդուկեանցի վաղուց սպասւած «Ամուսիններ» նոր պիեսը:

Բայց ահա զանազանութիւնը. եթէ անցեալ տարւալ ներկայացման առիթով հասարակութեան ուշքը գրեթէ ամբողջապէս կլանւած էր ներկայացնողների խաղով, ալս տարի նոյն ալն հասարակութիւնը ամբողջապէս նւիրւած էր պ. Սունդուկեանցի պիեսին, «Ամուսիններին»: Ներկայացնողները—կին թէ մարդ—ալս անգամ երկրորդ պլանի վերալ էին, չը նաւած որ նոքա ալնքան չաղողակ կատարեցին իրանց գերերը, որ, նոյն իսկ անցեալ տարւալ խաղից չետոյ, դժւար էր սպասել: Եւ ալը կողմից մանաւանդ իրանց վերալ ուշք դարձրին օրիորդ Նաղարէկեան, որը, ինչպէս անցեալ տարի, նոյնպէս և ալս անգամ կնջ զերբից կարևորագոյնն էր կատարում, և պ. Քալանթարեան, նոր բնւ դուրս եկող երիտասարդ, որը իւր խաղով դրականապէս գերազանցեց ամեն սպասելիք: Ներկայացնողներից միւսները՝ տ. Աւթանդիլեան, տ. Խոսրովեան և ալն, որպէս նաև պարոններից Մամիկոնեանը, Մանգինեանը, Տիգրանեանը իրանց չատկաց-

րած դերերը կատարեցին առնւազն արնպէս, ինչպէս այդ պահանջւում էր պիեսի հեղինակից:

Այս հանգամանքը ես չիշատակում եմ ոչ կոմպլիմենտներ անելու համար: Բանն այն է, որ դերակատարութեան լաուրէիւնը միանգամայն անհրաժեշտ էր, որպէս զի հասարակութիւնը առանց խանգարելու կարողանար իւր ուշադրութիւնը լարած պահել դէպի պիեսը, կարողանար հետեւել պիեսի գործողութիւններին, դուրս բերած տիպերին: Շատ և շատ էր խօսացւել «Ամուսինները» մասին, որպէս զի կարելի լինէր հետաքրքրութիւնը բաժանել պիեսի և խաղացողների մէջ:

Բայց կա՞ հետաքրքրութիւն էլ՝ հետաքրքրութիւն էլ: Մի նոր պիես, մանաւանդ գրած մի անուն ունեցող հեղինակից, միշտ անհամբերութեամբ է սպասւում հասարակութիւնից: Բայց այս անգամ հետաքրքրութիւնը լոկ դրական չէր: «Ամուսինները» մասին լսած էր, որ այդ պիեսում շօշափւում է «ամուսնական խնդիրը», «ապահարզանի» խնդիրը:

Դիւթական խօսքեր: Մեր հասարակութիւնը, որը այնքան անզղալ է դէպի շատ ու շատ խնդիրներ, հազար ու մէկ կենսական երևոյթներ, դէպի հրապարակախօս ձայնը, իրան զարմանալի զբաղւած է ցոյց տալիս, երբ խօսքը մէկ՝ եկեղեցու ու կրօնի մասին է, մէկ էլ՝ ամուսինների մասին: Ինձ հարկաւոր է այդ հանգամանքը լիշել. դա կապ ունի այն տրամադրութեան հետ, որ ունէր հասարակութիւնը «Ամուսինները» ներկայացումից առաջ, ներկայացման ժամանակ. և ներկայացումից յետոյ: «Ամուսինները» ներկայացումը բարձրացրեց մեծ փոթորիկ ինտելիգենտ շրջաններում. և դորա պատճառը անկարելի է հասկանալ առանց իմանալու մի բան, որ հետեւեալն է. Եթե անասնական թւականների վերջում, այն ժամանակաւ աղատամիտ կոչւած կուսակցութեան օրդան «Մշակ» լրագիրը չարուցեց «ապահարզան»-ի խնդիրը: Ապահարզան նշանակում է մարդ ու կնոջ իրարից օրինապէս բաժանելը, որով թէ մէկը և թէ միւսը իրաւունք են ձևւոք բերում կրկին ամուսնանալ ում հետ և կամենան, այսինքն արնպէս, ինչպէս ամուսինները:

Խնդիրը, պէտք է ասած, լաւ չը դրւեց այն ժամանակ ամեն խրճիւղներ «դնող» Գր. Արծրունուց: Մի խնդիր, որը կենսական ամենանշանաւոր խնդիրներից մէկն է, մի խնդիր, որը միշտ առաջաւոր մարդկանց խորհրդածութեան առարկաներից մէկն է կազմել, մի խնդիր, որի վերաջ վերանորոգիչներ, ֆիլոսոֆաներ և պետական մարդիկ գլուխ են կոտրել, մի խնդիր, վերջապէս, որը ունի մի ահագին գրականութիւն—խնդիրների մէջ այդ, համարձակւում եմ ասել, ոչ միայն փափուկը, այլ և ազնազոյնը՝ չուզւեց մի մարդուց, որը իրան չը պէտք է ընդունակ ցոյց տար խնդրին այն լրջութիւնը և ազնւութիւնը շնորհելու, որոնց նա արժանի է: Ես չը դիտեմ, որ, եթէ խնդիրը աւելի լաւ կերպով դրւէր, ապահարզանի միտքը չէր ունենալ արդեօք նույնքան կատաղի հակառակորդ-

ներ, որքան ալդ և զաւ ալն ժամանակ, Դա՝ ապագայի հարց է, բալց ալս ըրպէին բաւական է իմանալ միայն ալն, որ հասարակութիւնը երկուսի բաժանւեց. մէկը ալն էր, որ ապահարզան էր պահանջում, միւսը ալն, որ դրան միանդամալն հակառակ էր: Ի՞նչ են հասկանում ապահարզան ասելով և կամ ինչպէս պէտք է փոխի ամուսնական օրէնսդրութիւնը—ալդ մասին խօսմ խօսք չը կար. կար միայն մի բողոք, դարձրած ամուսնական կաշկանդումների դէմ առհասարակ, իսկ միւս կողմից կար նոյնքան անորոշ բողոք ալդ անսակ ազատական պահանջների դէմ: Աս հետաքրքրւել եմ իմանալ մի բան՝ թէ ձրքան և ինչպէս են հասկանում մէկը և միւսը իրանց հալեցակէտները: Պատահում էր ինձ լինել ալդ դանաղան շրջանների մէջ և մեծ մասամբ ես զարմացմամբ նկատել եմ, որ ապահարզան պահանջողները ազատ սէր են պահանջում: Ազատ սէր ասելով առհասարակ հասկանում են ալս.—եղիւր մէկի հետ քանի որ նորան սիրում ես. իսկ երբ մի ուրիշին սիրեցիր՝ զմն նորամօտ. երրորդին սիրեցիր՝ կապիւր նորա հետ, թողնելով նորան, ում հետ կապւել էիր առաջ, մի խօսքով՝ ազատ սէրի քարոզիչները հիմնում են ամուսնական միասնակեցութիւնը սէրի գոյութեան վերալ. և որովհետև հասարակութիւնը չի գնում ու հարցնում կնոջ և տղամարդին թէ նոքա սիրոյ են թէ ոչ, ալդ պատճառով երբ մի կին թողնում է իւր մարդուն՝ ուրիշի մօտ ապրելու, իսկ մի տղամարդ դուրս է անում իւր կնոջ՝ մի ուրիշի հետ ապրելու համար—ազատ սէրի վերալ հիմնւած մի օրէնսդրութեան օրերում—ալդ երևութը կը մնար անքննին և, որպէս ալդպիսին, նա կը լինէր արդարացրած, մի և նոյն է, թէ ինչն է եղել բաժանուման բուն պատճառը:

Ահա, ալդ է ազատ սէրի դօքտրինը, վարդապետութիւնը: Ալդ, կարծեմ, միակ բանն է, որի համար մարդիկ խորհուրդ են հարցրել անասուններից, և սոքա էլ առաջարկել են իրանց ամուսնական սահմանադրութիւնը, որը սակալն ընդունել են անհատներ, բալց դեռ ևս ոչ մի հասարակութիւն և պետութիւն աշխարհիս երեսին:

Նրբ ապահարզանի հակառակորդներին ևս բան հարցնում, նոքա ուղղակի և առանց ալ և ալլութեան ժխտում են որ և է անհրաժեշտութիւն՝ ամուսինների իրարից բաժանւելու գործը օրէնսդրական կերպով հեշտացնել: Նրբ դուք փորձում էք նորան հասկացնել, որ ախար անմեղ գոհեր են լինում ալդ կարդ ու կանոնի իշխանութեան ժամանակ, նոքա ձեզ պատասխանում են, թէ բաժանւելը հեշտացնելով՝ տնաքանդութեան դուռը լալն բացած կը լինինք և թէ ժողովուրդի մեծամասնութիւնը ալդ փոփոխութեան կարիքը չի գդում և որ հակառակ մտածողները բացառութիւններ են: Իբր թէ ապահարզանի օրէնքը մտցնելով՝ հալկական ընտանիքի հիւրը խախտւած կը լինի և որ ալդ խնդիրը օտարամուտ է, հալերին չի սազում և ալն և ալն:

Ալքանը, ինչ վերաբերում է պատմութեան: Աս ալս բոլորը լսելով,

եկալ միայն այն եղրակացութեան, որ ամուսնական և մասնաւորապէս ապահարդանի խնդիրը միայն չուզած է մեզանում, բայց որ նա դեռ ևս չի դրած ու չի քննած:

Ապահարդանը ընդունում է նաև մեր եկեղեցական օրէնքը: Ակըղբունքի մասին ուրեմն վէճ չի կարող լինել: Խնդիրը կարող է լինել միայն այն, թէ, ներկալ հանգամանքներում, որքան է պահանջուում որ օրէնքը թույլ տալ բաժանելը և կրկին ամուսնանալը նաև այնպիսի դէպքերում, որոնք ալթման օրէնքով բաւարար չեն համարում լիակատար ապահարդանի համար: Սա ասում եմ՝ ալթման հանգամանքներում, որովհետև ապահարդանի հետացրած օրէնքները ծնունդ են ոչ թէ ազգային առանձնալատկութիւնների, այլ սօցիալական-քաղաքական հանգամանքների: Բոլորովին դորա հակառակը ես կը պնդեմ, որ ամուսնութիւնը, հալեացքները ամուսնութեան խորհուրդի վերաջ ոչ այնքան սօցիալական հանգամանքների ծնունդ են, որքան ազգային առանձնալատկութիւնների: Սա ալտեղ պատշաճ չեմ համարում ալթ մասին երկարաբանել: Բայց ես խոստանում եմ «Մուրճ»-ի ընթերցողներին մի ալ անգամ դէպքից օգտուել ալթ վերին աստիճանի հետաքրքրական առարկայի մասին ընդարձակօրէն խօսել: Առ ալթմ ուրեմն ես բաւականանում եմ միմիայն պնդելով՝ առանց երկար ու բարակ բացատրութիւնների: Ա՛ւաւելացնեմ միայն, որ հէնց նոյն իսկ այն պատճառով, որ ամուսնութեան կամ նաև ընտանիքի մասին ունեցած հալեացքները ազգային առանձնալատկութիւններից շատ միտ կախումն ունին, հէնց ալթ պատճառով էլ հետացրած ապահարդանի օրէնքներից օգուտ քաղելը մի երկրում ալ է, միւս երկրում ալ: Իսկ ինչ վերաբերում է մեզ՝ հայերիս, ես ոչինչ վախ չեմ կրում, եթէ ապահարդանի օրէնքը աւելի մեղմանալ: Ոչ, ես չեմ հաւատում թէ դորանով հալկական ընտանիքի հիմքը կը քանդուի: Ով ալթ պնդում է, նա ամենևին չի ճանաչում ոչ հալ մարդուն, ոչ հալ կնոջ, ոչ հալ ընտանեկան ոգին: Ալթ ոգին այնպէս է, որ նա աւելի մեղ պէտք է տրամադրէ դէպի աւելի ազատ մտածողութիւն, քան դէպի մտավախութիւն: Բայց չարաչար սխալում են նոքա, որոնք ամուսնական խնդրի մէջ լուկ ապահարդանի խնդիր են տեսնում և երեակալում, թէ ապահարդանի ամենաազատական օրէնքներով կարելի է նաև ազատ ընտանիք՝ բուն սիրով վերալ հիմնւած ամուսնական կապեր ստեղծել: Ոչ, ապահարդանը շատ և անսահման աւելի փոքր խնդիր է, քան ամուսնութեան խնդիրը: Ի՛նչպէս.— ալթ մասին պ. Սունդուկեանցի «Ամուսինները» թերևս մի բան կ'ասեն:

«Ամուսինները», ալթ մէկ Արկադի Սամսոնեանն է, մէկ էլ նորա կին Մարգարիտը: Արկադի (և ալթ անունը ռսերէնում գործ են ածում հալկական Առաքել, Արշակ և ուրիշ անունների տեղ), Արկադին, ասում եմ, բարձր պաշ-

տօնեալ է, մեծ աղղեցութեան տէր մարդ, ունի շատ ստորադրեալներ, որոնցից ամենամօտն է Աբէլ Մաստակեանը, իւր մեծաւորի ամենահաւատարիմ և նորա համար ամեն բան լանձն առնող ստորադրեալը, մանաւանդ օգտակար իւր տիրոջ օգտին կաշառքների գործեր ղրստելու համար։ Այս անբարոյական է ալդ Արկադին, վերին աստիճանի անբարոյական՝ թէ իւր գործավարութեան պաշտօնում և թէ իբր մարդ և ամուսին։ Իբր պաշտօնեալ՝ նա կաշառակեր է, իբր մարդ՝ ոչ ոքից չը քաշտդ, խաբեբալ, իւր ամենահաւատարիմ մարդկանց հաւատարմութիւնը ի չարն գործ դնող, իսկ իբր ամուսին՝ նա կատարեալ ցինիկ է, մի կատարեալ շուն-մարդ։ Վերին աստիճանի վաւաշոտ, ամուսնութիւնը հասկանում է նա միմիայն ձևի համար, ամուսին մարդու հասարակական դիրքից ազատելու համար, այն էլ միայն՝ եթէ կինը մեծ օժիտ ունի վերան։ Մարգարիտը, որը արդէն 7—8 տարի է Արկադիի հետ ամուսնացած է, մի շատ փափուկ սրտի սէր կլին է, սնւած այն բոլոր դադափարներով, ինչ մի անարատ և սիրող սիրտ կարող է որոնել նորագուն գրականութեան և համեստ ու իրանց գործին նւիրած մտաւոր մշակների հասարակութեան մէջ։ Արկադին մեծ արտիստ է իրան ձևացնելու արհեստի մէջ։ Եւ երևակայում եմ, որ Արկադին՝ պատրաստելով պսակել՝ իրան ձևացնում է եղել իբր սիրելու ընդունակ, բայց և շատ խիստ բարոյականութեան տէր և իւր պաշտօնական ասպարիզին հետամուտ մի մարդ։ Կտկութիւններ, որոնցից մէկը Մարգարտին կարող էր գրաւել, միւսը՝ ծնողներին, եթէ միայն Մարգարտի ներկայով դատուելով լինինք նորա անցեալի մասին։ Բայց Մարգարտը շատ շուտով տեսնում է, որ իւր մարդը ամենինն այն չէ, ինչ պէտք էր սպասել։ Նա, իւր չարաբերութիւնների մէջ դէպի իւր կինը, վերին աստիճանի դուրսկութիւն է ցուց տալիս։ Նա իւր կնոջով չի զբաղւում, նրանով չի հետաքրքրւում ամենինն, քէֆեր ու խնջողքներ է սարքում պոռնիկալին զարմութիւնների համար, և վերջապէս կասկածել է տալիս, որ նոյն իսկ իւր տունը ծպտեալ կանաք է ներս մտցնում։ Մարգարտը մի անգամ վերջապէս ականատես է լինում, թէ ինչպէս Արկադին, իւր մարդը, նորա ստորադրեալ Մաստակեանի կնոջ պաշտակից հանում է մի տոմսակ, բայց այնպէս, որ կասկած չէր կարող լինել, թէ դա՝ մի սիրահարական նամակ է և կամ մի ժամադրութեան տոմսակ։

Այս նոյն ալդ անբարոյական, դէպի իւր կինը ցինիկապէս անհաւատարիմ Արկադին նախատում է իւր կնոջ, թէ ինչո՞ւ սա զբօսնում է ժողովարանում և իւր տանը ընդունում է Արտաշէս Արամեանին, որը Մարգարտին սիրել է դեռ ևս պատանեկութիւնից, բայց, դժբաղդ զգալով իրան՝ լսելով Մարգարտի մարդի գնալը, իրան նւիրում է գլխարական ծառաութեան և մասնակցում ռուս-տաճկական պատերազմին՝ ի ղուր կերպով ապտեղ իւր մահը որոնելով։ Արտաշէսի և Մարգարտի չարաբերութիւնները նկատւում են ամենքից։ և ստորադրեալ Մաստակեանը իւր պարտականու-

Թիւնն է համարում տեղեկացնել իւր տիրոջ, սորա կնոջ ու Արտաշէսի մասին պտտող «ասէ-կօսէներին» մասին: Իսկ Արկադիին, չը սիրելով և ոչ էլ չարգելով իւր կնոջ, միշտ կեղծել է ուրիշների մօտ, իբր նորա և կնոջ միջի չարաբերութիւնները շատ քնքռել են և սիրալին: Այժմ, տեսնելով որ հասարակութիւնը ուշք է դարձրել Մարգարտի և Արտաշէսի մտերմական չարաբերութիւնների վերաջ, զաւրանում է և Արտաշէսին, Մարգարտի մօտ հիւր եղած ժամանակ, հեռացնում է և պատուիրում է ծառաներին՝ ալդ պարոնին ալ ևս չ'ընդունել: Մարգարտը, ալդ դէպքից լետ, չալտնում է Արկադիին, որ ալ ևս սորա կինը չէ և հեռանում է Արկադիի տնից, տեղափոխւելով մի մասնաւոր տան մէջ: Այդ սցենաների միջոցին Մարգարտի մօտ հիւրասիրւում է Թիֆլիս մի քանի օրով եկած գաւառական վարժուհի Հեղինէն, որի հետ ծանօթանում է ուսում առած մի գիւղատնտես, Շիրակեան, որը ժամանակ առ ժամանակ զալիս է եղել Թիֆլիս և որի միակ հոգեկան բաւականութիւնը լինում էր Մարգարտի հասարակութեան մէջ լինելը: Ծանօթանալով Հեղինէի հետ, նա սիրահարւում է և լետուց, Մարգարտի բաժանւած ժամանակ, սորա մօտ մի անգամ չալտնում է իւր սէրը Հեղինէին, որը վերջինս ընդունում է: Այդ միջոցին վերաջ է հանում ինչ որ հետազօտութիւնների համար գաւառները գնացած սպալ Արտաշէսը, որը, նորանշանածների գնալուց լետուց, մարդուց արդէն հեռացած Մարգարտին չալտնում է իւր սէրը և առաջարկում է իւր հետ միասին ապրել: Մարգարտը, սակալն, չարգելով հասարակաց կարծիքը, իւր համաձայնութեան պալմանը ալն է դնում, որ նախ ապահարզանի թուղթը ստացւի: Եւ Արտաշէսը դուրս է դնում գոչելով, թէ կը վերադառնալ բաժանման թուղթը ձեռքին, որ անպատճառ ալդ թուղթը նա ձեռք կը բերէ:

Ահա «Ամուսինների» կատարւող գործողութեան թելը: Բալց նշանաւոր տեղ է բռնում պիեսի, մանաւանդ երրորդ գործողութեան մէջ, Արկադիի շալտութեան տեսարանները, և այն, թէ ինչպէս Արկադին ուղում է համոզել մի հարուստ ալդի կնոջ՝ Վարդուհի Վարվառեանին, թէ ինչպէս գժւած սիրում է սորան և առաջարկում է իւր հետ ապրել ալժմ, երբ Մարգարտից բաժանւած է, որ լետուց պսակւի հետը: Վարդուհին հասկացնում է Արկադիին, որ սա կարող է պսակւել միալն ալն ժամանակ, երբ ապահարզան ստացած լինի և որ մինչ ալդ օրը նա չի համաձայնւել նորա առաջարկութեանը: Արկադիի չալտութեան տեսարաններից մէկն է նաև Արկադիի լիրբ առաջարկութիւնը վարժուհի Հեղինէին, երբ վերջինս հիւր էր Արկադիի տանը Մարգարտի չը բաժանւած ժամանակ:

Ահա, մի ալսալիսի պիեսի հանդիսատես էր հասարակութիւնը լունւարի 25-ին: Իսկ հասարակութեան սպասելիքները խօմ ես պատմել եմ

արդէն, Դէ, ես պէտք է նախ արձանագրեմ այս փաստը, որ առանց բացառութեան, ամենքը, իւրաքանչիւր գործողութիւնից չեսող, չլարած իրար հարցնում էին, թէ այս ինչ բան է, որ գրել է պ. Սունդուկեանցը, նա, որից սովոր էին տեսնել կեանքի ընթացական պատկերներ, ընթացական թէ ներկայացրած տիպերով և թէ խօսակցութիւնով, ոճերով, Գրեթէ ոչ մի գործող անձ չի վերցրած կեանքից ալիպէս, որ հասարակութիւնը կարողանալ ալի անձերին ճանաչել: Ո՛վ է ալի բարձրաստիճանը՝ ոտից մինչ գլուխ փչացած, չալտութիւնների և զեղխութեան մէջ խարխափող Արկադի Սամսոնեան. ալի ո՛վ է Մարգարիտը, հարուստ ընտանիքից և ալի մի բարձրաստիճան մարդու կինը, որի համար ոչինչ են, ոչինչ՝ նորա բարձր հասարակական գիրքը, հարստութիւնը և որը, շրջապատւած գրեթէ ամեն նիւթական բարիքներով, ապրում է զեղարեւոտի և դրականութեան իդէալական աշխարհում և որին տարիները չեն կարողանում ընկճել. և ո՛վ է արդեօք ալի սպան, համալսարանը աւարտելուց չեսող, միմիայն լուսահատ սիրուց դէպի մի պատանեկական ընկերուհին, ոչ թէ մէկ, ալ երկու բարձր զինուորական ուսումնարաններ աւարտողը, մահ գտնելու համար պատերազմի դաշտը գնացողը, մեծամեծ սխրագործութիւններ գործողը, լոկ սիրու կրակովը վառւած դէպի արդէն մարդու գնացած մի կնիկ, որի դժբաղդութեան մասին նա տարիներ շարունակ ոչինչ չը գիտէր: Եւ ալն էլ մի սպա, որը Արկադիի բոլոր վիրաւորիչ խօսքերին ուրիշ ոչինչ չը դիտէ պատասխանել, քան՝ «պարոն, պարոն... խնդրեմ, պարոն» և դորա նման մկմկումներ: Եւ դեռ ինչպիսի վիպասան է ալի սպան. Մարգարիտը նորա վէպերը կարդալով չի կշտանում: Եւ ալի վէպերը գրած է մի սպա, որը 8 տարում երեք բարձրագոյն ուսումնարաններ է աւարտում, ալիսինքն, ալն է անում, ինչ ամենաընդունակին մէկը հաղիւ 10—12 տարում կարող էր անել: Իսկ ո՛վ է ալի ուսումնի աւարտած գիւղատնտեսը, որ Թիֆլիսի շրջակայքում ֆերմերութիւնով է պարապած և որի երջանկութեան համար միմիայն մի կին է պակասում...

Երբ ես ասում եմ, ո՛վ է սա, ո՛վ է ալն միւսը, ես դորանով ուզում եմ ասել՝ ցոյց տւէք ալն շրջանը, որի տիպն է մէկը, միւսը, երրորդը: Ի դուր ներկայացման ներկայ եղողները նալում էին մէկը միւսի երեսին՝ պատասխան գտնելու համար—և պատասխան ոչ ոք չէր գտնում:

Միակ գործող անձը, որի տիպարը կարելի է կեանքից վերցրած համարել, դա՛ վարժուհի Հեղինէն է: Այո, արդարև, Հեղինէն հալ վարժուհի է. նորա բերանը դրած խօսքերը—կարող է գրեթէ ամեն մի հալ վարժուհի կրկնել: Բայց բոլոր մնացած գործող անձերը՝ ֆիկցիաներ են, պալմանական կամ ենթադրական անձնաւորութիւններ են:

Բայց ինչի՞ն էին հարկաւոր դրամատուրգին պալմանական անձնաւորութիւններ, նորա համար, կ'ասեմ ես, որ պ. Սունդուկեանցին աւելի հետաքրքրել է մի պրօբլեմ, քան կեանքի նկարագիրը: Եւ ալի պրօբ-

լեմը՝ բաժանման խնդիրն է։ Արկաղին մեր հասարակութեան ոչ մի շըրջանը ներկայացնող տիպար չէ. բայց նա անբարոյական է վերին աստիճանի, Կան արդեօք անբարոյական ամուսիններ, — ահա խնդիրը։ Այո, մինչև անգամ ծալրալեղ անբարոյական ամուսիններ կան, որոնց կանաչք ընդհակառակը շատ բարոյական են, կանաչք, որոնք ամուսնու մէջ չեն գրտնում ոչինչ մխիթարութիւն, կանաչք, որոնք կ'ուզէին սիրել, բայց դորա առարկան չեն կարողանում գտնել իրանց ամուսինների մէջ։ Պ. Սունդուկեանցի Մարգարիտը ալնպէս ինչպէս բեմի վերաջ նրան տեսնում ենք, ծնունդ չէ հալ հասարակութեան. բայց նորա նման դժբաղդներ կան նաև հալ հասարակութեան մէջ. դոքա այն կանաչք են, որոնք իրանց ամուսինների մէջ բարոյապէս բարձրանալու փնակէտներ չեն գտնում, ալլ նոցա ազդեցութեան ներքոյ միմիայն կեղծւելու, ստորանալու, բարոյապէս ճնշւելու մեքենաներ են տեսնում։

Ուրեմն, եթէ պ. Սունդուկեանցի պիեսի մէջ չը կան իրական տիպեր, կան գոնէ դրութիւններ, որոնք, եթէ ընդհանուր են, դորանով պակաս հալկական չեն։ Եւ հետաքրքրականը այն է, թէ պ. Սունդուկեանցը ինչպէս է հասկանում ալլպիսի դրութիւնների դէմն առնելու խնդիրը։ Եւ պէտք է ասած, որ հասարակութիւնը հէնց ալլ կէտի վերաջ էր ուշադիր։ Եւ ահա այն կէտը, որի նկատմամբ քննադատութիւնը մտնում է իւր կատարեալ իրաւունքների մէջ, Ընդհանուր կարծիքը, ճիշդն ասած, միանգամայն դատապարտեց «Ամուսիններ»-ի իմաստը։ Բայց ամենքը դատեցին ոչ մի և նոյն բանի պատճառով. Եւ ահա ինչ հիմունքներ են բերում։ Ինչո՞ւ բաժանւեցին ամուսինները. որովհետեւ մէկը հրէջ էր, միւսը հրեշտակ։ Արդ, եթէ պ. Սունդուկեանցը կամենում էր խնդիր վճռել, նա, նպատակին հասնելու համար, պէտք է վերցնէր հանգամանքը ոչ ալլ աստիճանի պարզ ձևով, որովհետեւ բաժանողները, մանաւանդ այն դէպքերում, որոնք հասարակաց ուշադրութիւնն են գրաւում մէկ կողմից ոչ ալլ աստիճանի հրէջներ են և ոչ ալլ աստիճանի հրեշտակներ։ Սրկորդ՝ վերցրէք մի ալլ դէպք, երբ կնոջ մարդը մի պատական մարդ է, բայց երբ ալլ նոյն կնոջ լետեից ընկած է մի ուրիշը, թէկուզ հէնց նոյն Արտաշէսը, որը ալլպէս կամ ալնպէս կարողանում է թափանցել ալլ կնոջ սիրտը, աշխատում է կնոջ և մարդու մէջ եղած բարոյական կապերը քանդել, մարդուն զինաւորել իւր կնոջ դէմ, որը իւր ազատումը բաժանման մէջ կարող է տեսնել։ Եւ գիտէք, ալլ Արտաշէսը կապւած է Մարգարտի հետ ոչ թէ պատանեկական լիռողութիւններով, ալլ իսկական ձգտումով նորա հետ կապւել. և նա ուղղակի չափնում է գիւղատնտես Շիրակեանին, որ ինքը իրան դժբաղդ է համարում, սիրելով մի կնոջ, որը ուրիշին է պատկանում։ Արդ Արտաշէսը ոչ մի փորձ չի փորձում Արկաղիին ուղիղ ճանապարհի վերաջ բերել. և լինէր սա պատական մի մարդ, ալնու ամենապիւր նա կը չաճախէր Մարգարտի մօտ, չափնի դիտաւորութիւնները իւր սրտումը պա-

հաճ: Այսպիսի տպաւորութիւն է աճում Արտաշէսը: Այս լանդիմանութիւնները, որ աճում են «Ամուսիններին», ես գտնում եմ իրաւացի, թէեւ «Ամուսիններին» իմաստը ես դորանում չեմ գտնում, Բայց նախ ես կը կամենայի պատասխանել այն անձերին, որոնք պահանջում են «Ամուսիններին» հեղինակից, որ սա բարդացնէր խնդիրը, դուրս բերելով բեմը ոչ թէ անգաւակ ամուսիններ, այլ զաւակներ ի տէր ամուսիններ: Ըստ իս, այդ հանգամանքը թէեւ անկարևոր չէ ինքն ըստ ինքեան, բայց նա խնդրին ուղղակի չի վերաբերում: Զաւակների ներկայութիւնը աղղում է ամուսնական լարաբերութիւնների վերաջ, բայց նա չի խանգարում, որ մարդ ու կնոջ մէջ լինին Արկադիի և Մարգարտի լարաբերութիւնները: Զաւակների ներկայութիւնը կարող էր չը խանգարել Մարգարտին սիրել Արտաշէսին, իսկ Արկադիին՝ վարել մեզ արդէն չափնի կեանքը: Մի՞թէ Օմուլեւսկու «Матъ за паромъ» վէպի մէջ երեք թէ չորս զաւակների ներկայութիւնը խանգարեց Պրոգորու ամուսիններին իրարից հեռանալ, իսկ Նելլաւէտա Պրոգորուսին՝ Սեւտլուի հետ Զւիցերիա գնալ նոյն իսկ իւր երեխաների հետ միասին:

«Ամուսիններին» իմաստը շատերը որոնում են նրանում, որ նա իբր թէ ցուց է տալիս մի դէպք, որտեղ ամուսինների բաժանւիլը բոլորովին բնական է և որի համար ամենքը կը վկայեն, որ ալդտեղ բաժանմունքը անհրաժեշտ էր, արդարացի էր, մանաւանդ մի դէպք, ուր կ'ինն է թողնում մարդուն: Եւ իբր թէ պիեսի «բարոյականը» սա է՝ հասարակութիւն, մի մեղադրիւր այն կնոջ, որը թողնում է իւր մարդուն՝ սորա անբարոյականութեան պատճառով:

Ես իսկապէս չը գիտեմ, ուղեցել է արդեօք հեղինակը ալդ բանը հասկացնել. ես կ'ասեմ միայն, որ, եթէ «Ամուսիններին» իմաստը ալդ է, նորա գրած պիեսը անհետաքրքրական է: Ինչո՞ւ.— Որովհետեւ նոյն իսկ հաճ հասարակութիւնը շատ համբերող է դէպի այն կանայք, որոնք, Մարգարտի նման, իրանց անարատ պահելով, հեռացած են ապրում իրանց օրինաւոր՝ բայց անառակ ամուսիններից: Հասարակութիւնը խիստ է վերաբերում միմիայն դէպի այն կանայք, որոնք, առանց ծանրակշիռ պատճառի, թողնում են իրանց ամուսիններին, մանաւանդ երբ նոքա ալդ կատարում են մէկ ուրիշի գիրկը ընկնելու համար:

Պ. Սունդուկեանցը չէր գրիլ մի մեծ պիես՝ ալդ աստիճանի անհամ (banal) բարոյականով: Եւ իրօք, «Ամուսիններին» մէջ կալ մի ալ բան, որը պէտք է գտնել, բայց որը խուսափում է ընդհանրութեան ուշադրութիւնից: Գրածքի կենդրոնակէտը այնտեղ չէ, ուր նորան որոնում են: Ըստ իս, պ. Սունդուկեանցի պիեսի մէջ կալ պատասխան մի հասարակական խնդրի. նրանց, որոնք ամուսնութեան խնդիրը լուծւած են համարում ապահարդանի թուլտուութիւնը հեշտացնելով, Պ. Սունդուկեանցը, իւր «Ամուսիններով», պատասխանում է՝ սխալում էք,

պարոններու կարծելով, որ, եթէ ամուսինների օրինական կերպով բաժանելը հեշտանալ, դորանով իբր բարօրութիւն մտած կը լինի ընտանիքներէ մէջ. որովհետեւ, եթէ ապահարդանի մեղմ օրէնքներով կարող է օգտել Մարգարիտը, նոյն հեշտութիւններից կ'օգտուի և մի Արկադի՝ մէկին (Մարգարտին) դժբաղդացներուց լետով, մի երկրորդին՝ (ալլի Վարդուհուն) դժբաղդացներու համար, Ուրևն, ուզում է ասել չեղինակը, եթէ բաժանելու հեշտութիւնը կարող է տանել Մարգարտին դէպի երջանկութիւնը, միւս կողմից նոյն օրէնքը Վարդուհուն կը դցի Արկադիի ձեռքը: Հասարակութեան առջև ցուց է տրոււմ, թէ ինչպէս ապահարդանը պահանջում է և՛ մի պատական կին և՛ մի փչացած մարդ: Եւ եթէ ալ դիւրեմից կա՛ մի եղրակացութիւն անելու, ալդ աչն է, որ ապահարդանը անպաւման կերպով դեռ ևս չի տանում դէպի փոխադարձ սիրոյ վերապահման կրկնամուսնութիւն: Որքան ուրախ կը լինի հասարակութիւնը, եթէ Մարգարիտը կարողանար մի լաւ մարդու հետ ապրել, նոյն քան կը տխրէր հասարակութիւնը, եթէ Արկադիին հեշտ միջոց տրւէր մի երկրորդ կնոջ անբաղդացներու:

Ահա, ըստ իս, «Ամուսինների» իմաստը: «Ամուսիններով» պ. Սունդուկեանցը ասում է թէ՛՝ զուր էք ամուսնութեան խնդիրը վերածում ապահարդանի խնդրի:

ԼՈՒՍԻՆԻ